




“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1889

ԹԻՒ 7



ԼՈՒԿԱՆՈՑ

ԼՈՒԿԱՆՈՑ

Իտալիոյ հիւսիսային մասին մէջ կը գտնուին երեք գեղեցիկ լիճեր. Մաճճիորէ, Լուկանոյ և Քոմոյ: Անոնք ամէնքն ալ են երկայն և նեղ, և ձևով այնպէս ծամածուռ են որ տեսարանը շարունակ կը փոխուի անոնց վրայ նաւարկողին աչաց առջև: Յիշեալ լիճերուն ամենէն մեծը, Մաճճիորէ, ունի 40 մղոն երկայնութիւն, բայց միայն երկու մղոն է անոր միջին լայնութիւնը: Մենք չենք յիշեր Եւրոպայի մէջ որ և իցէ աւելի հմայիչ տեսարան մը քան զոր տեսանք մինչ կ'անցնէինք անոր վրայէն քանի մը տարի առաջ: Լուկանոյ լիճը այս երեք լիճերուն ամենէն փոքրն է. և անոր մէկ ծայրէն կը վազէ գետ մը որ կը թափի Մաճճիորէ լճին մէջ: Մաճճիորէ և Քոմոյ լիճերն աւելի երկայն գետերու միջո-

ցաւ կը թափեն իրենց ջուրերը փոյ գետոյն մէջ:

Լիճերէն երկուքը կ'երկնան հիւսիս՝ դէպ ի Զուիցերիա, և Լուկանոյ քաղաքը որմէ իւր անունը կ'առնու Լուկանոյ լիճը, է Զուիցերական քաղաք: Կը տեսնէք պատկերին մէջ թէ ի՞նչ հրապուրիչ երևոյթ ունի այն: Ոչ թէ այն փոքր քաղաքին շէնքերը, այլ անկէ տեսնուած լիճը և լեռներն են որ տարուէ տարի հազարաւոր ճանապարհորդներ կը քաշեն իրենց: Քաղաքէն իբր երկու մղոն հեռի կայ զառ ի վեր բլուր մը Մոնթէ Մալվաթորէ կոչուած որ 2,000 ոտք բարձրութիւն ունի, և պատկերին մէջ կը տեսնուի իւր գագաթին վրայի մատուռով: Յիշեալ բլուրն գագաթէն կ'երևի մէկ կողմը Մոնթէ Ռոզա, և միւս կողմը՝ Միլանի մայր եկեղեցին:

ՉԵՍ ԿՐՆԱՐ ԱԻՐԵԼ

“Մի գրեք այդ տեղը,” Ըստ հայր մը իւր որդւոյն, որ աղամանդով մը կը գրէր պատահանի ապակոյն վրայ. “չես կրնար արել զայն:”

Որդեակ, երբեք կը պատահի քեզի որ գրես ամէն որ այնպիսի բաներ զորս չես կըրնար արել: Անցեալ օր կ'ծուխօսք մը խօսեցար մօրդ. այդ խօսքը գրուեցաւ անոր սիրող սրտին վրայ և մեծ վիշտ տուաւ անոր: Հիմա հոն է այն, և ամէն անգամ որ մայրդ կը խորհի անոր վրայ, կը վիրաւորէ զնա: Չես կրնար արել զայն: Դու օր մը չար խօսք մը բոխի խաղի ընկերներէդ մէկուն ապակոյն: Գրուեցաւ այն խօսքը անոր մտքին վրայ, և ընել տուաւ անոր չար գործ մը: Հոն է հիմա այն. դուն չես կրնար արել զայն:

ՅԱՒԱԳԱՐ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՑ ՄԸ

Օր մը տասը, տասնումէկ տարեկան անտերունչ խեղճ տղայ մը որ շատ նիհարացած և մաշած էր երկար ատենէ հետէ հիւանդութիւն մը ունենալով, ի կրասկոյ արքունի հիւանդանոցը հանուեցաւ վերամբարձ գործիքով, որպէս զի վիրաբուժական գործողութիւն մը կատարուէր անոր վրայ՝ յուսարով թէ այդ կերպով պիտի երկարէր տղին կեանքը: Խեղճը այնպէս տկարացած էր որ ոչ միայն կը վախցուէր թէ գործողութիւնը յաջող արդիւնք պիտի չունենար, այլ կը վախցուէր նաև թէ գործողութեան միջոցին կամ անկէ անմիջապէս ետքը տղան կարող պիտի չըլլար ցաւին գիմանալ և պիտի մեռնէր: Հասնելէն ետքը հիւանդանոցը որ եկեղեցւոյ


սրահի կը նմանի, և մինչ կը պատրաստուէր սեղանը որոյ վրայ պիտի կատարուէր վիրաբուժական գործողութիւնը, տղան նստեցուցին կակուղ նստարանի մը վրայ. և նա վեր նայելով դէպ ի քանի մը ուսանողներ որք հոն կը գտնուէին անսեղ գործողութիւնը, ըսաւ խեղճ և դողդոջուն ձայնով, «Պարոններ, ձեզմէ մէկը կը հաճի աղօթք մը ընել ինձ նման եղկելի տղի մը համար: Ես մեծ նեղութեան և տառապանքի մէջ եմ, ըրէք աղօթք մը առ Յիսուս ինձ համար իմ սաստիկ նեղութեանս մէջ»: Վիրաբոյժը չըյերով անոր ուսը իւր ձեռքով, քաղցրութեամբ խօսեցաւ անոր. բայց տղան չլսելով աղօթքի ձայն, և հաւանականապէս տեսնելով միայն տիրութիւն քանի մը ուսանողաց երեսներուն վրայ, իւր երեսը մէկդի դարձուց և մանկական ձայնով և խօսքերով որ բաւական կը լուռէին իւր բոլորակը գտնուողներէն, խնդրեց Յիսուս բարեկամէն, «դնա սիրող փոքր տղոց բարեկամէն», ըլլալ իրեն հետ, ուղորմութիւն ընել իրեն իւր ցաւերուն մէջ: Եւ մինչ երկայատարող տղքերը «լըրֆօր» կու տար տղին որպէս զի ցաւ չըզար գործողութեան ժամանակը, կը ըրէր տակաւին անոր աղօթքին խօսքերը մինչև այնչափ ատեն որ տղին խելքը գլուխն էր: Վիրաբոյժը մինչ կը կենար սեղանին քով որոյ վրայ տղան պառկած էր, գիտնալով որ պիտի կատարէր պող զգացում, հանդարտութիւն և փափուկ շօշափում պահանջող գործողութիւն

նոյն քով ալ որոյ վրայ կը պառկէր փոքր տղան. և անսեղով անոր դէմքը խաղաղ և հանդարտ, հասկցաւ թէ ցաւերը թեթեւցած էին և ինք առողջանալու կողմը դարձած էր: Վիրաբոյժը անկողնոյն գլուխն երթալով և տղին փոքրիկ և նիհար ձեռքը բռնելով, շնչեց անոր ականջին, «Բարի Յիսուսը աղօթքիդ լսեց երէկ»: Պայծառ, երջանիկ և գոհ երևոյթ մը առաւ տղին դէմքը, և իւր փոքրիկ ձեռքը մեղմով սեղմելով վիրաբոյժին ձեռքը, նայեցաւ անոր երեսը և ըսաւ, «Անչուտ պիտի լսէր նա ինձ»: Յետոյ ըսաւ նաև, «Տղքեր, դուն ալ մար-

լան լսելով թէ տղան առողջացաւ և հիմա տունը կը գտնուի:

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՌՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիա, ընդարձակ կղզին կամ ցամաքը, երեք միլիոն քառակուսի մղոն տարածութիւն ունի, և միայն երեք ու կէս միլիոնէն քիչ աւելի բնակիչ, որ ըսել է թէ հազիւ մէկ բնակիչէ աւելի կ'իյնայ մէկ մղոնին: Բայց բնակիչք շատ անհաւասար կերպով բաժնուած են. անոնց գրեթէ բոլորը կը գտնուին կղզոյն արևելեան և հարաւային արևելեան մասանց մէջ: Արևմտեան Աւստրալիա, որ կղզոյն հինգ



ՓԻՔՉ, ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՌՍՏՐԱԼԻՅՑ ՄԱՐԻՒՄԱՐԵ

զատիրութիւն ըրիր ինձ:» Բայց իրեն այնպէս թուելով թէ տղքերը վարձ մը կը պահանջէր իւր հոգածութեան և աշխատանքին փոխարէն, ըսաւ լալազին, «Բայց ես ձեզի տարու բան մը չունիմ»: Եւ յետոյ իւր մտքին մէջ պայծառ խորհուրդ մը գալով և քիչ մը գուարթութիւն իւր ձայնին, ըսաւ. «Ես հիմա պիտի աղօթեմ ձեզի համար, Տղքեր»: Վիրաբոյժը հիւանդանոցէն դուրս ելլելէ առաջ երբ մնաւ բարով կ'ըրէր տղին, հարցուց անոր թէ ուրիշ կու գար և ո՛ւր սորված էր Յիսուսի վրայ այսչափ բաներ, և այսչափ կաթողին սիրել զնա: Տղան պատասխանեց. «Ես Պէրճէլտէ կու գամ»: «Եւ դուն կիրակնօրեայ դըպրոցի աշակերտ էիր հոն»: Հարցուց վիրաբոյժը: «Այո», պատասխանեց տղան:

Մեր ընթերցողք ուրախ պիտի ըլլաւ զգացումն և շօշափումն փափուկութիւն, որ պէտք էին գործողութիւնը կատարելու համար, ամէնքն ալ եկան իրեն, և գործողութիւնն աւարտեցաւ սովորականէն աւելի դիւրութեամբ, ճարտարութեամբ և յաջողութեամբ: Հետեւեալ առաւօտ, վիրաբոյժը գնաց նայիլ հիւանդանոցին մէջ գըլանուող հիւանդները մէկ անկողինէն միւսը անցնելով, և եկաւ այն անկող-

բաժանմանց մեծագոյնն է, 1884 ին ունէր իւր 33,000 բնակիչ միայն. և այսպէս իւրաքանչիւր երեք բնակիչ կ'իյնայ 100 քառակուսի մղոն: Կան քանի մը պատճառներ թէ ինչու համար Անգլիացի գաղթականներէն այսպէս քիչեր բնակութիւն հաստատած են կղզոյն այս մասին մէջ: Այն պատճառներէն մին սա է որ հոն կ'աճին թունաւոր քանի մը տեսակ տունկեր զորոնք ուտել շատ կը սիրեն ոչխարք և արջառք, բայց կենդանիք զանոնք ուտելով կ'ուռին և կը մեռնին քանի մը ժամէն: Հողը մշակելով հնար է ջնջել այս խտտերը: Արևմտեան Աւստրալիոյ մէջ բնակիչ քիչ ըլլալուն ուրիշ պատճառ մը սա է որ մինչև 1868 Անգլիայէ հոն կը զրկուէին եղեռնագործներ, և համեստ գաղթականք չէին կամեր բնակիլ անոնց հետ: Բայց ի ստոնցմէ պատճառ մի ևս՝ երկրին մէկ

մասին չոր և աւազուտ ըլլալն է. Բայց անտարակոյս պիտի գայ ժամանակ երբ պիտի յաղթուին բոլոր այս արգելքները, և Արևմտեան Աւստրալիոյ բնակիչները միխրոններով պիտի համրուին փոխանակ հազարներով համրուելու:

Նախորդ երեսի պատկերը կը ներկայացուցնէ Արևմտեան Աւստրալիոյ մայրաքաղաքը, Փէրթհ, որ է փոքր քաղաք 7,000 բնակիչներով: Հաճելի դերը ունի Սուոն գետին վրայ և փողոցներն են լայն: Պատկերին մէջ երեցած մեծագոյն չէնքն է քաղաքապետութեան պալատը որ շինուեցաւ ոճրագործաց աշխատութեամբ: Անոր մօտ կը տեսնուի երեք ճակատով տանիք ունեցող չէնք մը որ է օրէնսդրական ժողովոյն դահլիճը:

ՔԱՆԿԱՐՈՒ

Երբ Անգղիացի նաւապետը, Գուք, ծովային ճամբորդութիւն կ'ընէր երկիրներ գտնելու նպատակաւ, քիչ մը ատեն կեցաւ Աւստրալիոյ ծովեզերքը որպէս զի նորոգէր իւր նաւը: և այն ատեն, 1770 ին, Եւրոպացիք առաջին անգամ տեսան քանկարուն: Այս կենդանին Աւստրալիոյ և մօտակայ կղզիներուն մէջ միայն կը գտնուի: Վերջին ատեններուս հետազօտութիւններէն հասկցուեցաւ որ Աւստրալիոյ մէջ կը գտնուէին իւր երեսուն տեսակ քանկարուներորոց ոմանք նապաստակի չափ փոքր էին, և ոմանք՝ մարդու չափ մեծ:

Անոնք բոլորն ալ ունին իրենց փորին վարի կողմը տուրակ մը ուր կը կրեն իրենց ձագերը, խոշոր և զօրաւոր յետակողմեան (ետևի) սրունքներ, սրոցմով շատ բարձր և հեռի կը նետուին, և մանր առաջակողմեան սրունքներ որոց վրայ կան հինգ կատարեալ մատեր: Քանկարուն միսը համեղ կը համարուի, և մորթը աղնիւ կաշի կը բանուի:

Տեղւոյն Անգղիացիք քանկարուն կ'որսան որսի շուներով: Բայց կենդանին երբեմն կը դառնայ կը յարձակի զինք հայաճող շուներուն վրայ և անոնց մարմնոյն մէջ կը բանայ վէրքեր իւր սուր ճիւղաններով, կամ զանոնք իւր թևերուն մէջ բռնելով ջուրը կը նետուի և կը խեղդէ հոն: Երբեմն մարդիկ ալ նոյն գտնադրութեան հանդիպած են:

Այս պատկերը կը ներկայացուցնէ քանկարուի որսորդութեան տեսարան մը: Իւրաքանչիւր քանկարու ոչխարի մը կերածին չափ խոտ կ'ուտէ. և շատ արագ կը բազմանան անոնք: Վասն որոյ ազդու միջոցներ գործածել պէտք է նուազցունելու համար անոնց թիւը: Միջոցներէն մին է սա որ բոլոր դրացի երկրագործք միաբանին և իրենց որսի շուներուն օգնութեամբ սպաննեն կարելի եղածին չափ շատ քանկարուններ: Այս միջոցը գործածուեցաւ, և հիմա շատ քիչ քանկարուններ կը տեսնուին Աւստրալիոյ ծովեզերեայ այն մասանց մէջ ուր կը բնակին Անգղիացի գաղթականաց մեծագոյն մասը:

Նութիւն էր անոր այս գործը: Այս իւր նպատակն էր կեանք մը ազատել: Երևակայեցէք թէ ինչ զգացում ունեցած էր Ալպերթ երբ իջաւ այն ծակէն ներս և վար գնաց այն ցուրտ և խեղդող ջրին մէջ: Եւ ինչ նպատակաւ: Ինչ կրնար ընել նա սառին տակ: Հոն փնտուեց աղջիկը և հասաւ անոր: Մէկ վայրկենէն վեր եկաւ վտանգեալ աղջիկը իւր հետ ունենալով: Հոն գտնուողները լսեցին որ հարուած մը կը տրուէր սառին ներքեկ կողմէն: Ալպերթ Պէթիսըն իւր զլխով կը զարնէր սառին: Գիտէր որ հարկ էր սառը կտորել երբ գար վեր, և




ՔԱՆԿԱՐՈՒ

ՇՔԱՌԱՄԻ ԱՐԺԱՆԻ

Ալպերթ Պէթիսըն է պատանի մը Բրիտանական նաւատորմին մէջ: Յուրտ եղանակ մը առիթ եղաւ որ նա ցուցնէր թէ էր դիւցազն մը: Շատ լաւ գործածեց իւր այն առիթը: Աղջիկ մը կ'անցնէր սառած գետի մը վրայէն, խորհելով թէ սառը պիտի դիմանար իւր ծանրութեանը: Բայց սառը կտորերով աղջիկը ջուրին մէջ ինկաւ և աներևութացաւ: Սոսկումով կը մտածէր ամէն տեսնող թէ աղջիկը անհնար էր որ ողջ ելլէր սառին տակէն դուրս: Մարդ մը ուզեց ընել բան մը: Սառին վրայէն քայլելով գնաց դէպ ի այն ահաւոր ծակը որ կլլած էր կեանք մը, բայց սոսկմամբ ետ դարձաւ: Յառաջ եկաւ Ալպերթ Պէթիսըն ալ: Բայց ինչ կրնար ընել: Հաստատ որոշմամբ քալեց դէպ ի սառին վրայ բացուած ծակը, ցատկեց և թաղուեցաւ անոր մէջ: Անձնասպա-

գործածեց իւր մի միայն մուրճը: Կամ գլուխը պինդ և կարծր ըլլալու էր, կամ սառը շատ թանձր ըլլալու չէր, վասն զի Ալպերթի մուրճը յաջողեցաւ:

Վեր կու գայ մուրճը, այսինքն՝ պատանոյ մը գլուխը, և անկէ ետքը Ալպերթ յերևան կ'ելլէ իւր հետ բերելով աղջիկը: Յետոյ ջրին եզերքը կը հանէ զնա: Ալպերթ Պէթիսըն արժանացաւ ընդունել Արքունի Մարդասիրական լնկերութեան բարձրագոյն շքադրամը, այսինքն՝ Սթէնհոփի ոսկի միտալը:



ԵՐԿՈՒ ՓԻՂԵՐՈՒ ԵՆԱՍԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ի տես հանուելու յատկացած երկու փիղեր գիշեր մը արձակուելով աշխուժիւ կը վազվազէին Գաղիոյ թուրն քաղաքին շուրջը: Անոնք ի տես հանուելը լմնալէն ետքը կտորտած էին իրենց կապանքները, և մինչ պա-

հասպանք խոր քնոյ մէջ էին, դուրս ելլելով վաղեցին լա Սէյնի պողոտային վրայ: Ազատ գտնելով զիրենք, սկսան երկնցունել իրենց կնճիթները (հո-ն-ո-ս) և շարժել աստ և անդ ուժով ուժով և յարձակիլ ուտելեաց վրայ: Նախ մասն պողոտաճառաց պարտեզները ուր կնճիթներով զարնելով փրցուցին կործանեցին պատեր շատ արագութեամբ, և այնուհետև շուտով յառաջ վաղեցին, արմատներէն հանեցին և իրենց ասագին բերաններէն վար զրիցեցին այլ և այլ տեսակ բոյսեր: Այնուհետև գացին յարձակեցան կոհիկ ազարակի մը վրայ, մտան ներս և հոն գտնուած ջերմանոցը (սե-ն-լէ) կործանեցին: Յետոյ հոտոտելով իրենց չորս կողմը գտան հացագործի մը խանութ լա Սէյնի արուարձանին մուտքին վրայ, և դէպի հոն դիմեցին փուռէն նոր հանուած հացին հաճելի հոտն առնելով: Խանութին տէրը դրան քով կը գտնուէր այն ատեն և տեսաւ միման մէջ ահագին բաներ որ կը մտնէնային: Մարդը կարծեց թէ աշխարհիս վախճանն հասած էր, և դողդոջելով ներս քաշուեցաւ և դրան նիզը լաւ մը հաստատեց: Փիղերն եկան և կեցան դրան քով, սկսան ծեծել դուռը իրենց կնճիթներով և հրել իրենց մարմիններով: Բարեբախտապէս դուռը շատ հաստատուն շինուած էր, այնպէս որ մարդը կրնար սպասել այս հաւանական աղետին առջև բաւական հանդարտութեամբ:


Փիղերը հասկնալով որ դուռը պիտի կարող չըլլային խորտակել, կտրտեցին խանութին քանի մը պատահանները և դարձեալ շարունակեցին երթալ իրենց ճամբան: Նշարելով զընչուներու վրաններ իրենց ճամբուն վըրայ, մտ գացին, անոնցմէ քանի մը հատը գետին կործանեցին, որով ստահալի աղաղակ մը փրթաւ վրաններուն մէջ: Կանայք և տղաք կը ճչէին, և արք կը յարձակէին իրենց վրանի ցիցերով կուտելու համար այն տարօրինակ թըշնամեաց հետ: Բայց այս ատեն փիղերուն պահապանները իմացած ըլլալով անոնց փախչելը, դեռ գնչուններուն վրանները բոլորովին չկործանուած անոնց օգնութեան հասան ոտտիկանութեան պաշտօնէից հետ:

ՇԱՆՍԱՊԻԿ

Շանաձկան անունը ստակում կու տայ մարդուս: Ահաւոր պատմութիւններ կ'ըսան թէ մարդիկ երկուքի կարուած են ճերմակ շանաձկանց ախտներուն

ներքե, և թէ նաւաւորներ նաւակաց մէջէն գլխիկայր ծոփն առնուելով շանաձկաներէն՝ ողջ ողջ կերակուր եղած են անոնց, և կարող եղած չեն հասնիլ տուն: Եւ սակայն մարդիկ կ'որսան այս ճուղերէն, և ասոնք շատ օղտակար կ'ըլլան երբ բռնուին: Յետեւ կայ հարկու տեսակ շանաձկ: Ոմանք են մէկ եարտա երկայն, և ոմանք մարդու մը երկայնութեան քանի մը անգամը: Շանաձկան մը լեարդը (հո-ն-ս) տանուութ, քան քաշ իւղ կուտայ: Մորթը խորտուբորտ և երբեմն կը գործածուի յղկիչ թուղթի տեղ, և մարդիկ սուրերու կոթեր անով կը պատեն իբրև դիմացկուն նիւթով: Մորթը յատուկ այս նպատակին կը գործածուի: Նաւաստիք կը մաքրեն և կը պատրաստեն շանաձկան գլխուն ըսկաւառակը որ շուտով կը գնուի մուսէններու համար: Անոր ողնայարի սիւնը մաքուր մը յղկուելով և ծայրն անցուելով սկի կոթ, կ'ըլլայ թանկագին դաւաշան: Շանաձկան թեւերը կը պարունակեն առատ նիւթ սոսնձի (հո-ն-ս), և հեշտասէր ջինացիք շատ հետամուտ են այս նիւթէն շինուած աճառի:

Խաղաղականի կղզեաց բնակիչները կ'ուտեն շանաձկան միսը, և անոր լեարդը արևու մէջ չորցուելէ ետքը արքայաւայել կերակուր կը համարին: Նաև անոր ակունները որ կտրուած ապակոյ նման սուր են, կը գործածուին իբրև գործիք: Այսպէս կը տեսնենք որ ոչ սոսկումը ոչ վտանգը արգելք կ'ըլլայ մարդուս քաջ հնարագիտութեան առջև: Կանուի կամ ուշ, մարդս բոլոր արարածները կը գործածէ բուն իւր պէտքերուն և հաճոյից:



ՍՈՒՆԿԸ ԻՆՉՊԵՍ ԱՆՈՒԿԸ ԿԸ ԲԵՐՈՒՄ
Միայն երեք երկիրներ կան ուր սունկը հնար է յաջողութեամբ մշակելանանք են Սպանիա, Փորթուկալ և Հիսպանիայի Ափրիկէ: Սունկի կազմին շատ չիճհար. սովորաբար միայն քառնէն մինչև քառասուն ոտք կը բարձրանայ: Սունկը շատ կամայ կ'աճի, և ծառերը մինչև որ քանուհինգ երեսուն տարու չըլլան, կարելի չէ առաջին կեղևը հանել անոնցմէ: Այս կեղևը կը կոչուի «կոյս սունկ», և պէտք է զայն զգուշութեամբ հանել, այնպէս որ չփասուի ներքին խաւը սպիզալին հիւսուածներուն որ յառաջ պիտի բերեն սունկ: Երկրորդ կեղևը կատարելութեան հասնելու համար պէտք է անցնի ութ մինչև տասն տարի ևս

ի Փորթուկալ, և սակէ երկու կամ երեք տարի աւելի՝ Սպանիա և Ալճերի: Կեղևը հանելու ժամանակն է Մայիսէ մինչև Սեպտեմբեր: Կեղևը բոլորակ կը ճեղքուի ծառին բունին կամ ոտտին շուրջը: յետոյ երկայն ճեղքուածներ կը բացուին ուզուած հեռաւորութեամբ՝ երկու կոթ ունեցող բոլորաձև գանալով: Այնուհետև կեղևը կը հանուի, և յետոյ խուրձ խուրձ կը հաւաքուի և կը տարուի գործարանները, ուր ջուրը կը խոթուի, կը քերուի, քանի մը վայրկեան կը խարշուի մեծ կաթսաներու մէջ, և այնուհետև կը չորցուի և ճնշման սակ դրուելով կը ապփակցուի: Առողջ ծառերը սովորաբար հարիւրէ մինչև հարիւր յիսուն տարի շարունակ կու տան սունկ: Ծառերուն կեղևները կը հանուին փեցէն մինչև ութ տարի միջոց տրուելով:

ԱՒԵԼԻ ԱՂԵԿ Է ՍՈՒՎԵԼ ԳԱՆ ԹԷ ԼԱԼ

Երբ կը պարտէի փողոցին մէջ, կ'ըսէ որ, տեսայ երկու փոքրիկ տղաք որ կ'երթային դպրոց: Աւելի փոքրը գլորեցաւ և ինկաւ, և թէպէտ շատ չփնասուեցաւ, բայց սկսաւ լալ: Մեծը բռնեց անոր ձեռքէն քաղցրութեամբ և ըսաւ. «Ո՛հ, բան չկայ, Յակոբիկ, մի լար, աղկէ շատ մը աղէկ է սուլելը» Այս ըսելով սկսաւ զուարթօրէն սուլել: Յակոբիկ ինքն ալ ջանաց սուլել: «Ես քեզի չափ աղուոր չեմ կրնար սուլել, կարոպետ», ըսաւ, «իմ շքութունքս լաւ չեն կրնար ժողովուիլ» «Պատճառն այն է որ տակաւին լացք բոլորովին չէ դադրած», ըսաւ կարոպետ, «բայց ջանա վայրկեան մը և սուլելովդ պիտի դադարի լացդ»: Յակոբիկ այնպէս ըրաւ, և լսեցի որ երկու փոքրիկները կը սուլէին մէկտեղ այնպէս աշխուժիւ որ կարծես թէ իրենց կեանքին դիտաւոր նպատակն էր սուլելը:

Ամերիկայի Միեւնոսաց ընկերութեան կողմէն,
Արտաստեր ճ. Գ. ԿԻՐԵ,
Տնօրէն Կոնսոլիդատիւ Ն. Ս. ՊԱՐԵԼԸՄ
Ճինճանցաբ կողուշտ. Ամերիգան Խան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՊՈՒՄ
Ի ՏԳՐԱՆԻ ԱՆՍՏՈՐ ԳՈՅԱՅՆՆԵՐ